28.04 2013թ.-ին կնքված №601-440 էլեկտրական հաղորդալարի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») կողմերը՝ «ՀԷՑ ՓԲԸ» «Տաթև» մասնաճյուղը «Սիսիան» էլ. ցանցեր՝ որ այսուհետ պայմանագրի հետագա շարադրանքում անվանվում է «Մատակարար», ի դեմս տնօրեն Գ. Մուրադյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Սիսիան» էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն՝ որ այսուհետ պայմանագրի հետագա շարադրանքում անվանվում է «Սպառող», ի դեմս տնօրեն Կ. Հովհաննիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագա շարադրանքում միասին անվանվելով «Կողմեր», իսկ յուրաքանչյուրը առանձին՝ «Կողմ», կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի *«Այլ պարամետրեր (լրացվում են կամքով)»* կետը լրացնել պարտադիր պարամետրով հետևյալ խմբագրությամբ՝ *«Սահմանված հատկացված հզորության հատվածում սպառողը վճարում է ստորև նշված սակագնի 0.1%-ի չափով, բայց ոչ ավելի քան պարտքի չմարված գումարի 10%-ը: Վճարի դիմաց, առաջնահերթության կարգով վճարվում է տուգան, ապա չվճարված գումարը»:*
2. Պայմանագրի №3 հավելվածը շարադրվում է նոր խմբագրությամբ (կցվում է):
3. Պայմանագրի մնացած բոլոր կետերը թողնել անփոփոխ:
4. Սույն Համաձայնագրի պարտավորությունները >> բաժանորդային օրենսգրքի 441-րդ հոդվածի երկրորդ մասին համապատասխան կիրառվում են 07.07.2013թ-ից հետո կնքվելիք միջև ձեռք հարաբերությունների նկատմամբ:
5. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և ուժի մեջ է մտնում կնքման (առաքվելուն) պահից:

Ի հաստատումն ինչի, կողմերը վերը նշված ամսաթվին կազմվեցին և կնքեցին սույն Համաձայնագրերը հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակներից յուրաքանչյուր օրինակը հանձնվեց (ներկայացվեց) մեկական օրինակ կողմերի համար:

### Կողմերի հասցեները և առաքագրությունները

| Մատակարար | Սպառող |
|---|---|
| «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ | |
| Մասնաճյուղ «ՏԱՏԵՎ» | Գ. Մուրադյան |
| Էլ. ցանց «ՍԻՍԻԱՆ» | Կ. Հովհաննիսյան |
| Գտնվելու վայր՝ ք. Սիսիան, Շիրվանզադե 14 | Գտնվելու վայր՝ ք. Սիսիան, Ս. Մամիկոնյան 6 |
| Տնօրեն Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | Տնօրեն Կ. Հովհաննիսյան |
| «ՀԱՅԿԱԿԱՆ ԷՑ» ՓԲԸ «ՏԱՏԵՎ» «ՍԻՍԻԱՆ» 01520662 | |

Հավելված N 3
էլեկտրական էներգիայի մատակարարման
(Մատակարար-միևչև 6(10)կՎ լարման ցանցերից
սնվող Սպառող (բացառությամբ բնակչության ) պայմանագրի

# Մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների վերաբերյալ

Մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագինն է՝ (դրամ/կՎտժ)

| | |
|---|---|
| Ուղի սպասք/ Տասկ.2-ի 1 կետով/ հաստատ | |
| սահմանված կարգով ՀՀՊԿ N:ՏՀ-560 4/0313.09.03.2013 | |
| 400/կՎ լարման 3903 Տ6-28.0.174 գործող պա- | |
| տասխան սպասքը սահմանել. Կետ/ համար | |
| գործողության պայմանական համար | 38 |
| գործողության պայմանական համար | 28 |

Մատակարար՝

տնօրեն Է.Սրգումանյան
(անուն ազգանուն, պաշտոն)

«ՀԱՅԿԱՅԱՆ» ՓԲԸ
«Տնօրեն» մասնաճյուղ
Է.Սրգումանյան
(ստորագրություն)

Կ.Տ «17» 10 2013 թ

Սպառող՝

Ջ. Հակոբյան
(անուն ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

Կ.Տ «17» 10 2013 թ

Հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի հոկտեմբերի 16-ի №422Ն որոշմամբ

# Էլեկտրական էներգիայի մատակարարման (Մատակարար-մինչև 6(10) կՎ լարման ցանցերից սնվող Սպառող (բացառությամբ բնակչության))

## Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N 610-0000371

Վանաձոր «15» 11 2011 թ.
(կնքման վայրը)

Մատակարարը՝ «Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
(ընկերության անվանումը)

«Մարտ» ՀԱ մարկետինգի գծով տնօրեն Գ. Ղուկասյան
(մասնաճյուղի անվանումը)

ի դեմս Ղուկասյան Ա. Հովհաննեսի-ի
(անունը, ազգանունը, պաշտոնը)

(գործում է Էլեկտրական ցանցերի փոխանցման և բաշխման ծառայությունների կարգավորման վերաբերյալ հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մի կողմից, և Սպառողը «ՀՀ Տավուշի մարզային դատախազություն» ՊՈԱԿ-ի պետական
(անունը, հայրանունը, ազգանունը կամ անվանումը)

ի դեմս Գևորգի Էդիկի Հարությունյանի գործադիր տնօրեն Ջ. Հարությունյանի
(անունը, ազգանունը, պաշտոնը)

որը գործում է Էլեկտրական ցանցերի և Հանրային ծառայությունների կարգավորման վերաբերյալ հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավորվում է Սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը պարտավորվում է վճարել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:

### 2. Կողմերի պարտականությունները

2.1. Կողմերը պարտավոր են ղեկավարվել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» N358Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով» (այսուհետ՝ ԷՄՕԿ) և սույն պայմանագրով:

2.2. Մատակարարը պարտավոր է.

1) մատակարարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ի N1925Ն որոշմամբ հաստատված էլեկտրամագնիսական համատեղելիության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգով սահմանված որակի էլեկտրական էներգիա.
2) ապահովել էլեկտրաէներգիայի մատակարարումը Սպառողին՝ սույն պայմանագրին կցված էլեկտրամատակարարման սխեմայով նախատեսված հուսալիությամբ.
3) մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, փոստային բաժանմունքների համապատասխան սպասարկման կետերում տեղադրել տեղեկատվություն՝ նախորդ ամսվա ընթացքում Սպառողի կողմից ապառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի մասին, եթե տեղեկացման այլ կարգ նախատեսված չէ սույն պայմանագրի 8-րդ գլխով.
4) Սպառողի դիմելու դեպքում 4-34-20 հեռախոսահամարով տրամադրել շահագրգիռ տեղեկատվություն կամ պարզաբանում վերջինիս դիմում-բողոքների և հարցադրումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման ընդհատումների, դադարեցումների արտճաների և վերականգնման

ժամկետների, սպառած էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի, վճարման ժամկետների, Մատակարարի և Սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ.

5) ԷՄՕԿ-ի 75-րդ կետով սահմանված ժամկետում պատասխանել Սպառողի բանավոր դիմումին՝ բանավոր, գրավոր դիմումին՝ գրավոր, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին՝ էլեկտրոնային փոստի միջոցով, եթե առանձին դեպքերի համար ԷՄՕԿ-ով այլ ժամկետ սահմանված չէ.
6) վճարման փաստաթղթում կամ հաշվում գրառումների սխալ հայտնաբերելու կամ Սպառողից այդ մասին դիմում ստանալու դեպքում ԷՄՕԿ-ի 53-րդ կետով սահմանված ժամկետում ստուգել իր գրառումները և արդյունքների մասին գրավոր տեղեկացնել Սպառողին, սխալի առկայության(հաստատման) դեպքում ուղղումը հաշվի առնել ընթացիկ ամսվա համար ներկայացվելիք վճարման փաստաթղթում.
7) Սպառողի պահանջով ԷՄՕԿ-ի 62-րդ կետով սահմանված ժամկետում ստուգել Սպառողի առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտությունը և նրան ներկայացնել դրա աշխատանքի ճշտության մասին գրավոր եզրակացություն.
8) իր միջոցների հաշվին կատարել առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ ԷՄՕԿ-ի 64-րդ կետով նախատեսված դեպքի.
9) ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով փոխարինել Սպառողի առևտրային հաշվառքի սարքերը և փոխարինումից հետո համապատասխան փոփոխություն կատարել սույն պայմանագրում (հավելված №1).

2.3 Սպառողը պարտավոր է վճարել յուրաքանչյուր ամսվա ընթացքում իր սպառած էլեկտրական էներգիայի դիմաց՝ սույն պայմանագրով սահմանված կարգով:

## 3. Սպառված էլեկտրաէներգիայի քանակության և արժեքի հաշվարկը, դրա վճարման կարգը

3.1. Մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանում է Հանձնաժողովը:
3.2. Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի փոփոխման դեպքում սահմանված նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:
3.3. Սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը, բացառությամբ սույն պայմանագրի 3.4 և 3.5 կետերով նախատեսված դեպքերի, որոշվում է Սպառողի առևտրային հաշվիչի՝ տվյալ հաշվարկային ամսվա և տվյալ հաշվարկային ամսվան նախորդող ամսվա գրանցած ցուցմունքների տարբերությամբ, իսկ չափիչ տրանսֆորմատորների առկայության դեպքում՝ այդ տարբերությունը բազմապատկելով նաև դրանց տրանսֆորմացիայի գործակցով:
3.4. Եթե առևտրային հաշվիչն ամիջապես գրանցում է հաշվարկային ժամանակահատվածում ծախսված էլեկտրաէներգիայի քանակը, ապա որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրաէներգիայի այդ քանակը:
3.5. Եթե առևտրային հաշվառքի սարքը տեղադրված է սահմանազատման կետից (հավելված №2) դուրս, ապա առևտրային հաշվառքի սարքով հաշվառված էլեկտրաէներգիայի քանակին գումարվում կամ այդ քանակից հանվում է առևտրային հաշվառքի սարքի տեղադրման և սահմանազատման կետերի միջև էլեկտրատնտեսակայանքներում առաջացած էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական կորուստների մեծությունը:
3.6. Առևտրային հաշվառքի սարքի խախտման (էլեկտրաէներգիայի քանակության սխալ գրանցում) դեպքում սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով՝ համաձայն ԷՄՕԿ-ի 12-րդ գլխի պահանջների:
3.7. Առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցում է Մատակարարը՝ տվյալ հաշվարկային ամսվա վերջին և հաջորդ ամսվա առաջին երկու աշխատանքային օրվա ընթացքում: Եթե սույն պայմանագրի 8-րդ գլխով նախատեսված է Սպառողի ներկայությամբ առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցելու Մատակարարի պարտավորություն, ապա վերջինս պարտավոր է Սպառողի առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցել նրա ներկայությամբ նախապես՝ առնվազն 3 օր առաջ գրավոր տեղեկացնելով առևտրային հաշվիչի ցուցմունքի գրանցման օրվա և ժամի մասին: Սպառողի չներկայանալու դեպքում Մատակարարն իրավունք ունի առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցել առանց Սպառողի:
3.8. Հաշվարկային ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված էլեկտրաէներգիայի արժեքը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնների (հավելված №3) և սպառված էլեկտրաէներգիայի քանակության արտադրյալով:
3.9. Սպառողը նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրական էներգիայի արժեքը պարտավոր է վճարել իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին համապատասխան տեղեկատվությունը սույն պայմանագրի 2.2 կետի 3-րդ ենթակետով նախատեսված սպասարկման կետերում տեղադրվելուց, իսկ սույն պայմանագրի 8-րդ գլխով տեղեկացման այլ կարգ նախատեսված լինելու դեպքում, այդ կարգով տեղեկացվելուց հետո 7 օրվա ընթացքում:

## 4. Սպառողի էլեկտրամատակարարման ընդհատման, սահմանափակման, դադարեցման և վերականգնման պայմանները

4.1. Մատակարարի կողմից պլանային-նախազգուշական աշխատանքներ կատարելու նպատակով

Սպառողի հոսանքազրկումը (պլանային ընդհատում) թույլատրվում է ԷՄՕԿ-ի 27-րդ կետով սահմանված դեպքում և կարգով:

4.2. Մատակարարը Սպառողի էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ԷՄՕԿ-ի 27-րդ կետով սահմանված ժամերին:

4.3. Սպառողի էլեկտրամատակարարման սահմանափակումները և վերականգնումն իրականացվում են սույն պայմանագրի 7.4 կետով նշված կարգի պահանջների համաձայն կազմված ծրագրերով:

4.4. Մատակարարը պարտավոր է դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը՝

1) Սպառողի գրավոր պահանջով և առաջարկած ժամկետում.
2) մարդկանց կյանքի և առողջության անվտանգությունն ապահովելու համար՝ Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով սահմանված դեպքերում.
3) Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում:

4.5. Մատակարարն իրավունք ունի դադարեցնել Սպառողի, (բացառությամբ վթարային կամ տեխնոլոգիական հզորություն ունեցող Սպառողի) էլեկտրամատակարարումը՝

1) սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սույն պայմանագրի 3.9 կետով սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում՝ առնվազն 3 օր առաջ գրավոր կամ Սպառողին հատու այլ ձևերով զգուշացնելուց հետո:
2) պարտքի մարման ժամանակացույցի խախտման դեպքում՝ ապահովելով սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ընթացակարգը.
3) եթե Սպառողը էլեկտրաէներգիան սպառել է առևտրային հաշվառքի սարքի միտումնավոր խախտումով կամ առանց առևտրային հաշվառքի սարքի, կամ առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով.
4) առևտրային հաշվառքի վերականգնման կամ առևտրային հաշվառքի սարքի փոխարինման նպատակով՝ մինչև 3 ժամ:

4.6. Վթարային կամ տեխնոլոգիական հզորություն ունեցող Սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցվում է ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով:

4.7. Պարտքի առկայության դեպքում Մատակարարը կարող է չդադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը, եթե Սպառողը ներկայացրել է Մատակարարի համար ընդունելի վճարման նրաշխիքներ կամ նրա հետ կազմվել է պարտքի մարման ժամանակացույց:

4.8. Մատակարարը Սպառողի էլեկտրամատակարարման չպլանավորված (արտապլանային) ընդհատումը պարտավոր է վերականգնել ԷՄՕԿ-ի 28-րդ կետով սահմանված ժամկետներում, իսկ եթե Սպառողի էլեկտրամատակարարման սխեման ապահովում է էլեկտրամատակարարման վերականգնման ավելի կարճ ժամանակահատված, ապա՝ այդ ժամանակահատվածում, որը կողմերը պարտավոր են սահմանել սույն պայմանագրի 8-րդ գլխով:

4.9. Եթե էլեկտրամատակարարման ընդհատումը տեղի է ունեցել առևտրային հաշվիչից անմիջապես հետո տեղադրված ավտոմատի անջատման արդյունքում, ապա Մատակարարը Սպառողի էլեկտրամատակարարումը պարտավոր է վերականգնել ԷՄՕԿ-ի 29-րդ կետով սահմանված ժամկետներում:

4.10. Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում Սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելուց հետո Մատակարարը սպասարկման օրերին (տարվա բոլոր օրերը, բացառությամբ կիրակի օրերի, ժամը 09:00-ից մինչև 17:00-ը) պարտավոր է այն վերականգնել ԷՄՕԿ-ի 52-րդ կետով սահմանված կարգով:

## 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով և ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

## 6. Ֆորս մաժորային իրավիճակներ

6.1. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն չեն կրում, եթե դա հետևանք է արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների, որոնք ստեղծվել են կողմերի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտառոց դրսևորումները (ինչպես օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը), որոնք խոչընդոտում են կողմերի գործունեությունը կամ հանգեցնում են նրանց ստանձնած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ անկախ նրանց կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թույլ տալու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

## 7. Լրացուցիչ պայմաններ

7.1. Մատակարարն իրավունք ունի Սպառողի կողմից վճարման համար սույն պայմանագրով սահմանված ժամկետի խախտման դեպքում խախտմանը հաջորդող օրացուցային տարում 3 անգամ այն կրկնելու դեպքում ԷՄՕԿ-ի 50-րդ կետով սահմանված կարգով Սպառողից պահանջել կանխավճար կամ իր համար ընդունելի վճարման այլ նրաշխիքներ, որը ներկայացնելուց Սպառողի հրաժարվելու դեպքում Մատակարարն իրավունք ունի նաև Սպառողին (բացառությամբ վթարային կամ տեխնոլոգիական

ոգորությունս ուսացող Սպառողը) առնվազն 5 ապատարկանաս օր առաջ գրավոր կամ ոսաայնոսագրով գգուշացնելուց հետո դադարեցնել նրա էլեկտրամատակարարումը:

7.2. Սպառողն իրավունք ունի կնքել իր առևտրային հաշվառքի սարքը, մասնակցել դրա աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր աշխատանքներին, այդ թվում նաև՝ ստուգաչափմանը, ԷՄՕկ-ի 65-րդ կետով սահմանված կարգով առևտրային հաշվառքի սարքի ճշտության ստուգումը պատվիրել նման իրավասություն ունեցող այլ կազմակերպությունների:

7.3. Սպառողի կողմից առևտրային հաշվառքի սարքը կնքելու դեպքում, այդ մասին սույն պայմանագրի №1 հավելվածում կատարվում է համապատասխան գրառում:

7.4. Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով նախատեսված դեպքերում կողմերը պարտավոր են սույն պայմանագրին կցել անբաժանելի մաս հանդիսացող տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորությունների ամրագրման վերաբերյալ ակտ, որը կազմվում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2003 թվականի փետրվարի 21-ի №9Ն որոշմամբ հաստատված էլեկտրամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակներում էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց կողմից իրականացվելիք գործողությունների ծրագրերի մշակման կարգի համաձայն:

7.5. Մատակարարը կամ Սպառողը կարող են սահմանագատման կետերում տեղադրել էլեկտրական էներգիայի որակի ցուցանիշները գրանցող և հիշող սարքեր:

7.6. Սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված էլեկտրական էներգիայի որակի ցուցանիշները գրանցող և հիշող սարքեր տեղադրելու դեպքում, կողմերը այդ մասին կազմում են երկկողմանի ակտ, որը կցվում է սույն պայմանագրին:

## 8. Այլ պայմաններ (լրացնում են կողմերը)

8.1. Հեռավոր հաշվիչի տվյալների չհայտնաբերման դեպքում կիրառվում է 0,1% չափով տուգանք, որը հաշվարկվում է ամսական հաշվարկի ենթակա գումարի 10%-ի չափով:

## 9. Վեճերի լուծումը

9.1. Սույն պայմանագրի առնչությամբ առաջացած վեճերը լուծվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով, իսկ կողմերից մեկի դիմելու դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ:

9.2. Սույն պայմանագրի 9.1. կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

## 10. Պայմանագրի գործողությունը և լուծումը

10.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով:

10.2.Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

10.3.Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի մատակարարման (Մատակարար-մինչև 6(10) կՎ լարման ցանցերից սնվող Սպառող (բացառությամբ բնակչության)) պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

10.4.Սույն պայմանագիրը կարող է լուծվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 11. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածների ցանկը

11.1. Հավելված №1 - Առևտրային հաշվառքի սարքի և առավելագույն թույլատրելի հզորության վերաբերյալ:

11.2. Հավելված №2 – Մատակարարի էլեկտրական ցանցի և Սպառողի սպառման համակարգի սահմանագատման կետի և էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանագատման վերաբերյալ ակտ:

11.3. Հավելված №3 – Մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների վերաբերյալ:

| Մատակարար՝ | Սպառող՝ |
|---|---|
| գտնվելու վայրը՝ ք. Կապան, Ս. Շահումյան 2/14 ՀՀ | գտնվելու վայրը՝ ք. Կապան, Ծովագործարանի 4 |
| Վհ՝ 60401102211 ՀՀ Դրամ, ՀՀ ՎՀԿ | Վհ՝ 900311408063 Դրամ, ՀՀ ԿԲ ք. Կապան |
| հեռախոս՝ 4-21-58, 4-29-23 | հեռախոս՝ 2-75-52, 2-75-09 |
| էլ. փոստի հասցե՝ | էլ. փոստի հասցե՝ |
| ֆաքս՝ 0286 4-21-57 | ֆաքս՝ 0285-2-75-09 |
| գործունեության լիցենզիա N՝ 01510552 | անձնագրի տվյալները՝ 3448 025880247 |
| դիրքը՝ | դիրքը՝ |
| (ստորագրություն, անուն, ազգանուն) | (ստորագրություն, անուն, ազգանուն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված №3
Էլեկտրական էներգիայի
մատակարարման
(Մատակարար-միջնեն 6(10) կՎ
լարման ցանցերից սնվող
Սպառող (բացառությամբ
բնակչության)) պայմանագրի

# Մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների վերաբերյալ

Մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագինն է՝

| | |
|---|---|
| Սչ պղնձեայով խոշոր 2.1 | ____ դրամ/կՎտժ |
| ստիմանալուկ սիմ | ____ դրամ/կՎտժ |
| ք. Աբով St 0201-ի ցիկ վճարել | ____ դրամ/կՎտժ |
| | ____ դրամ/կՎտժ |
| Էլէկտրը սպասվում հասնի | 30 դրամ/կՎտժ |
| ցիկլերը սպասում հասի | 20 դրամ/կՎտժ |
| | ____ դրամ/կՎտժ |
| | ____ դրամ/կՎտժ |
| | ____ դրամ/կՎտժ |
| | ____ դրամ/կՎտժ |

Մատակարար՝

Ա. Հովհաննիսյան Սիմ. ի ցիկ պ

(անուն ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

Կ.Տ

Սպառող՝

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված №2
Էլեկտրական էներգիայի
մատակարարման
(Մատակարար-վինչև 6(10) կՎ
լարման ցանցերից սնվող
Սպառող (բացառությամբ
բնակչության)) պայմանագրի

## Ակտ

## Մատակարարի էլեկտրական ցանցի և Սպառողի սպառման եռամակարդի սահմանազատման կետի և էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման վերաբերյալ

1.Կողմերի սահմանազատման կետն է՝

1.1. ք. Մեղրի ՏԷ 0205 -ի ց/ի ելքային

2. Կողմերի էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման կետն է՝

2.1. ք. Մեղրի ՏԷ 0205 ց/ի ելքային

**Մատակարար՝**

Ա. Հովսեփյան Մեղրի ցանց պետ
(անուն ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

Կ.Տ

**Սպառող՝**

(անուն, ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

Կ.Տ

*Հավելված №1*
Էլեկտրական էներգիայի մատակարարման
(Մատակարար-միճչև 6(10) կՎ լարման
ցանցերից սնվող Սպառող (բացառությամբ
բնակչության)) պայմանագրի

# Առևտրային հաշվառքի սարքի և առավելագույն թույլատրելի հզորության վերաբերյալ

| Սպառողի հաշվառքի սարքի տեղադրման վայրը | Առևտրային հաշվառքի սարք | | | | | | | | | | Առավելագույն թույլատրելի էլեկտրական հզորություն /կՎտ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հաշվիչի | | | | Հոսանքի չափիչ տրանսֆորմատորի | | | Լարման չափիչ տրանսֆորմատորի | | | |
| | տեսակը, գործառնական համարը, տեղադրված կնիքների համարը | թույլատրելի հոսանքը (Ա) | անվանական լարումը (Վ) | հաջորդ պլանային ստուգաչափման ամիսը և տարեթիվը | տեսակը, գործառնական համարը, տեղադրված կնիքների համարը | ճշտության դասը | անվանական տրանսֆորմացիայի գործակիցը | տեսակը, գործառնական համարը, տեղադրված կնիքների համարը | ճշտության դասը | անվանական տրանսֆորմացիայի գործակիցը | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| ք.Սևան SE0205 | CJM-36 AK#05694 | 3×5 | 3×220/380 | մարտ 2015 | | | | | | | 15 |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |

**Մատակարար՝**

Ա. Հարությունյան, ՄՀՊ-ի պետ
(անուն ազգանուն, պաշտոն)

Կ.Տ

**Սպառող՝**

(անուն, ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

Կ.Տ

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
## Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

քաղաք Մեղրի «17» 10 2013թ.

15.11 2011 թվականին կնքված №Ա-341 էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ «*Պայմանագիր*»), կողմերը՝ «ՀԷՑ» ՓԲԸ մասնաճյուղը, որը սույն պայմանագրի հետագա շարադրանքում անվանվում է «*Մատակարար*», ի դեմս տնօրեն Ա. Հակոբյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____, որը սույն պայմանագրի հետագա շարադրանքում անվանվում է, «*Սպառող*», ի դեմս տնօրեն _____, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագա շարադրանքում միասին անվանվելով «*Կողմեր*», իսկ յուրաքանչյուրը առանձին՝ «*Կողմ*», կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի *«Այլ պայմաններ (լրացնում են կողմերը)»* կետը լրացնել պարտադիր պայմանով հետևյալ խմբագրությամբ՝ «*Սահմանում համար հաստատված ժամկետի խախտման դեպքում սպառողը վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի 0.1%-ի չափով, բայց ոչ ավելի, քան պարտքի ընդհանուր գումարի 10%-ը: Մեկ դեպք, առաջնահերթության կարգով վճարվում է տույժը, ապա չվճարված գումարը*»:
2. Պայմանագրի № 3 Հավելվածը շարադրվում է նոր խմբագրությամբ (կցվում է):
3. Պայմանագրի մնացած բոլոր կետերը թողնել անփոփոխ:
4. Սույն Համաձայնագրի պայմանները ՀՀ բաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի երկրորդ մասին համապատասխան կիրառվում են 07.07.2013 թ-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:
5. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և ուժի մեջ է մտնում կնքման (ստորագրման) պահից:

Ի հաստատումն ինչի, կողմերը վերը նշված ամսաթվին կազմեցին և կնքեցին սույն Համաձայնագիրը հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակներից (յուրաքանչյուր օրինակը հայերեն լեզվով)՝ մեկական օրինակ Կողմերի համար:

**Կողմերի հասցեները ու ստորագրությունները**

| Մատակարար | Սպառող |
|---|---|
| «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ | |
| Մասնաճյուղ «Հարավային էլեկտրական ցանցեր» | |
| Գտնվելու վայրը ՀՀ, ք. Մեղրի, Ա. Մանուկյան 2 | Գտնվելու վայրը ք. Մեղրի, Ի. Մելիքյան 24/1 |
| Տնօրեն Ա. Հակոբյան | Դիրեկտոր |
| Ստորագրություն | Ստորագրություն |
| կ.Տ. | կ.Տ. |

Հավելված № 3
Էլեկտրական էներգիայի մատակարարման
(Մատակարար-միևչև 6(10) կՎ լարման ցանցերից
սնվող Սպառող (բացառությամբ բնակչության)) պայմանագրի

# Մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների վերաբերյալ

Մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագինն է՝ (դրամ/կՎտժ)

| | |
|---|---|
| Սույն պայմանագրի հավելված 2.1 | |
| աղյուսակում նշված բ. միջ | |
| տե 0205-ի ծ/ք կոնտրոլ | |
| | |
| | |
| Ցերեկային ազատ համար | 38 դր/կՎտժ |
| Գիշերային ազատ համար | 28 դր/կՎտժ |

Մատակարար՝

(անուն, ազգանուն, պաշտոն)

«ՀԱՅԿԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ»
«ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑ

Կ.Տ «01» 08 2013 թ.

Սպառող՝

(անուն, ազգանուն)

(պաշտոն)

Կ.Տ «17» 10 2013 թ.

Հավելված №1
Հաստատված է ԼՂՀ հանրային ծառայությունները
և տնտեսական մրցակցությունը կարգավորող
պետական հանձնաժողովի
2008թ. մայիսի 4-ի թիվ 24Ն որոշմամբ

# Էլեկտրական էներգիայի մատակարարման
# (Մատակարար-մինչև 6(10) կՎ լարման ցանցերից սնվող Սպառող
# (բացառությամբ բնակչության))

## Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N 457

(կնքման վայրը) «23» հունվար 2009 թվական

Մատակարարը՝ «Արցախ-Էներգո» ՓԲԸ
(ընկերության անվանումը)
Արեգնատ Ռուբենի Գրիգորյան,
(մասնագետի անվանումը)
ի դեմս լիազորված Ռուբեն Գրիգորյանի,
(անունը,ազգանունը, պաշտոնը)
որը գործում է լիազորագրի հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)
մի կողմից, և Սպառողը Գրիգորի Ռուբենի Գրիգորյան ՀՀ-ից,
(անունը, հայրանունը, ազգանունը կամ անվանումը)
ի դեմս ինքնուրույն,
(անունը,ազգանունը, պաշտոնը)
որը գործում է _____ հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)
մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավորվում է Սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը պարտավորվում է վճարել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:

### 2. Կողմերի պարտականությունները

2.1 Կողմերը պարտավոր են ղեկավարվել «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2007 թվականի նոյեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» 16Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով» (այսուհետ՝ ԷՄՕԿ) և սույն պայմանագրով:

2.2 Մատակարարը պարտավոր է.

1) մատակարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 20-ի N537Ն որոշմամբ հաստատված էլեկտրամագնիսական համատեղելիության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգով սահմանված որակի էլեկտրական էներգիա.

2) ապահովել էլեկտրաէներգիայի մատակարարումը Սպառողին՝ սույն պայմանագրին կցված էլեկտրամատակարարման սխեմայով նախատեսված հուսալիությամբ.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործող բանկերի, փոստային բաժանմունքների համապատասխան սպասարկման կետերում տեղադրել տեղեկատվություն՝ նախորդ ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի մասին, եթե տեղեկացման այլ կարգ նախատեսված չէ սույն պայմանագրի 8-րդ գլխով.

4) Սպառողի դիմելու դեպքում _____ հեռախոսահամարով տրամադրել շուրջօրյա տեղեկատվություն կամ պարզաբանում վերջինիս դիմում-բողոքների և հարցադրումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման ընդհատումների, դադարեցումների պատճառների և վերականգնման ժամկետների, սպառած էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի, վճարման ժամկետների, Մատակարարի և Սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ.

5) ԷՄՕԿ-ի 75-րդ կետով սահմանված ժամկետում պատասխանել Սպառողի բանավոր դիմումին բանավոր, գրավոր դիմումին՝ գրավոր, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին՝

էլեկտրոնային փոստի միջոցով, եթե առանձին դեպքերի համար ԷՄՕԿ-ով այլ ժամկետ սահմանված չէ.

6) վճարման փաստաթղթում կամ հաշվում գրառումների սխալ հայտնաբերելու կամ Սպառողից այդ մասին դիմում ստանալու դեպքում ԷՄՕԿ-ի 53-րդ կետով սահմանված ժամկետում ստուգել իր գրառումները և արդյունքների մասին գրավոր տեղեկացնել Սպառողին, սխալի առկայության (հաստատման) դեպքում ուղղումը հաշվի առնել ընթացիկ ամսվա համար ներկայացվելիք վճարման փաստաթղթում.

7) Սպառողի պահանջով ԷՄՕԿ-ի 62-րդ կետով սահմանված ժամկետում ստուգել Սպառողի առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտությունը և նրան ներկայացնել դրա աշխատանքի ճշտության մասին գրավոր եզրակացություն.

8) իր միջոցների հաշվին կատարել առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ ԷՄՕԿ-ի 64-րդ կետով նախատեսված դեպքի.

9) ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով փոխարինել Սպառողի առևտրային հաշվառքի սարքերը և փոխարինումից հետո համապատասխան փոփոխություն կատարել սույն պայմանագրում (հավելված №1).

2.3 Սպառողը պարտավոր է վճարել յուրաքանչյուր ամսվա ընթացքում իր սպառած էլեկտրական էներգիայի դիմաց՝ սույն պայմանագրով սահմանված կարգով:

3. Սպառված էլեկտրաէներգիայի քանակության և արժեքի հաշվարկը, դրա վճարման կարգը

3.1. Մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանում է Հանձնաժողովը:

3.2. Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի փոփոխման դեպքում սահմանված նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:

3.3. Սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը, բացառությամբ սույն պայմանագրի 3.4 և 3.5 կետերով նախատեսված դեպքերի, որոշվում է Սպառողի առևտրային հաշվիչի՝ տվյալ հաշվարկային ամսվա և տվյալ հաշվարկային ամսվան նախորդող ամսվա գրանցած ցուցմունքների տարբերությամբ, իսկ չափիչ տրանսֆորմատորների առկայության դեպքում՝ այդ տարբերությունը բազմապատկելով նաև դրանց տրանսֆորմացիայի գործակցով:

3.4. Եթե առևտրային հաշվիչն ամիջապես գրանցում է հաշվարկային ժամանակահատվածում ծախսված էլեկտրաէներգիայի քանակը, ապա որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրաէներգիայի այդ քանակը:

3.5. Եթե առևտրային հաշվառքի սարքը տեղադրված է սահմանազատման կետից (հավելված 2) դուրս, ապա առևտրային հաշվառքի սարքով հաշվառված էլեկտրաէներգիայի քանակին գումարվում կամ այդ քանակից հանվում է առևտրային հաշվառքի սարքի տեղադրման և սահմանազատման կետերի միջև էլեկտրատեղակայանքներում առաջացած էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական կորուստների մեծությունը:

3.6. Առևտրային հաշվառքի սարքի խախտման (էլեկտրաէներգիայի քանակության սխալ գրանցում) դեպքում սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով՝ համաձայն ԷՄՕԿ-ի 12-րդ գլխի պահանջների:

3.7. Առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցում է Մատակարարը՝ տվյալ հաշվարկային ամսվա վերջին և հաջորդ ամսվա առաջին երկու աշխատանքային օրվա ընթացքում: Եթե սույն պայմանագրի 8-րդ գլխով նախատեսված է Սպառողի ներկայությամբ առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցելու Մատակարարի պարտավորություն, ապա վերջինս պարտավոր է Սպառողի առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցել նրա ներկայությամբ նախապես՝ առնվազն 3 օր առաջ գրավոր տեղեկացնելով առևտրային հաշվիչի ցուցմունքի գրանցման օրվա և ժամի մասին: Սպառողի չներկայանալու դեպքում Մատակարարն իրավունք ունի առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցել առանց Սպառողի:

3.8. Հաշվարկային ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված էլեկտրաէներգիայի արժեքը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների (հավելված 3) և սպառված էլեկտրաէներգիայի քանակության արտադրյալով:

3.9. Սպառողը նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրական էներգիայի արժեքը պարտավոր է վճարել իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին համապատասխան տեղեկատվությունը սույն պայմանագրի 2.2 կետի 3-րդ ենթակետով նախատեսված սպասարկման կետերում տեղադրվելուց, իսկ սույն պայմանագրի 8-րդ գլխով տեղեկացման այլ կարգ նախատեսված լինելու դեպքում, այդ կարգով տեղեկացվելուց հետո 7 օրվա ընթացքում:

## 4. Սպառողի էլեկտրամատակարարման ընդհատման, սահմանափակման, դադարեցման և վերականգնման պայմանները

4.1. Մատակարարի կողմից պլանային-նախազգուշական աշխատանքներ կատարելու նպատակով Սպառողի հոսանքազրկումը (պլանային ընդհատում) թույլատրվում է ԷՄՕԿ-ի 27-րդ կետով սահմանված դեպքում և կարգով:

4.2. Մատակարարը Սպառողի էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ԷՄՕԿ-ի 27-րդ կետով սահմանված ժամերին:

4.3. Սպառողի էլեկտրամատակարարման սահմանափակումները և վերականգնումն իրականացվում են սույն պայմանագրի 7.4 կետով նշված կարգի պահանջների համաձայն կազմված ծրագրերով:

4.4. Մատակարարը պարտավոր է դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը՝

1. Սպառողի գրավոր պահանջով և առաջարկած ժամկետում.
2. մարդկանց կյանքի և առողջության անվտանգությունն ապահովելու համար՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով սահմանված դեպքերում.
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում:

4.5. Մատակարարն իրավունք ունի դադարեցնել Սպառողի, (բացառությամբ վթարային կամ տեխնոլոգիական հզորություն ունեցող Սպառողի) էլեկտրամատակարարումը՝

1. սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սույն պայմանագրի 3.9 կետով սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում՝ առնվազն 3 օր առաջ գրավոր կամ Սպառողին հասու այլ ձևերով զգուշացնելուց հետո:
2. պարտքի մարման ժամանակացույցի խախտման դեպքում՝ ապահովելով սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ընթացակարգը.
3. եթե Սպառողը էլեկտրաէներգիան սպառել է առևտրային հաշվառքի սարքի միտումնավոր խախտումով կամ առանց առևտրային հաշվառքի սարքի, կամ առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով.
4. առևտրային հաշվառքի վերականգնման կամ առևտրային հաշվառքի սարքի փոխարինման նպատակով՝ մինչև 3 ժամ:

4.6. Վթարային կամ տեխնոլոգիական հզորություն ունեցող Սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցվում է ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով:

4.7. Պարտքի առկայության դեպքում Մատակարարը կարող է չդադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը, եթե Սպառողը ներկայացրել է Մատակարարի համար ընդունելի վճարման երաշխիքներ կամ նրա հետ կազմվել է պարտքի մարման ժամանակացույց:

4.8. Մատակարարը Սպառողի էլեկտրամատակարարման չպլանավորված (արտապլանային) ընդհատումը պարտավոր է վերականգնել ԷՄՕԿ-ի 28-րդ կետով սահմանված ժամկետներում, իսկ եթե Սպառողի էլեկտրամատակարարման սխեման ապահովում է էլեկտրամատակարարման վերականգնման ավելի կարճ ժամանակահատված, ապա՝ այդ ժամանակահատվածում, որը Կողմերը պարտավոր են սահմանել սույն պայմանագրի 8-րդ գլխով:

4.9. Եթե էլեկտրամատակարարման ընդհատումը տեղի է ունեցել առևտրային հաշվիչից անմիջապես հետո տեղադրված ավտոմատի անջատման արդյունքում, ապա Մատակարարը Սպառողի էլեկտրամատակարարումը պարտավոր է վերականգնել ԷՄՕԿ-ի 29-րդ կետով սահմանված ժամկետներում:

4.10. Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում Սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելուց հետո Մատակարարը սպասարկման օրերին (տարվա բոլոր օրերը, բացառությամբ կիրակի օրերի, ժամը 09:00-ից մինչև 17:00-ը) պարտավոր է այն վերականգնել ԷՄՕԿ-ի 52-րդ կետով սահմանված կարգով:

## 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով և ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

## 6. Ֆորս մաժորային իրավիճակներ

6.1. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն չեն կրում, եթե դա հետևանք է արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների, որոնք ստեղծվել են Կողմերի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (ինչպես օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը), որոնք խոչընդոտում են Կողմերի գործունեությունը կամ հանգեցնում են նրանց ստանձնած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ անկախ նրանց կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

## 7. Լրացուցիչ պայմաններ

7.1. Մատակարարն իրավունք ունի Սպառողի կողմից վճարման համար սույն պայմանագրով սահմանված ժամկետի խախտման դեպքում խախտմանը հաջորդող օրացուցային տարում 3 անգամ այն կրկնելու դեպքում ԷՄՕԿ-ի 50-րդ կետով սահմանված կարգով Սպառողից պահանջել կանխավճար կամ իր համար ընդունելի վճարման այլ երաշխիքներ, որը ներկայացնելուց Սպառողի հրաժարվելու դեպքում Մատակարարն իրավունք ունի նաև Սպառողին (բացառությամբ վթարային կամ տեխնոլոգիական հզորություն ունեցող Սպառողի) առնվազն 3 սպասարկման օր առաջ գրավոր կամ հեռախոսագրով զգուշացնելուց հետո դադարեցնել նրա էլեկտրամատակարարումը:

7.2. Սպառողն իրավունք ունի կնքել իր առևտրային հաշվառքի սարքը, մասնակցել դրա աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր աշխատանքներին, այդ թվում նաև՝ ստուգաչափմանը, ԷՄՕԿ-ի 65-րդ կետով սահմանված կարգով առևտրային հաշվառքի սարքի ճշտության ստուգումը պատվիրել նման իրավասություն ունեցող այլ կազմակերպությունների:

7.3. Սպառողի կողմից առևտրային հաշվառքի սարքը կնքելու դեպքում, այդ մասին սույն պայմանագրի №1 հավելվածում կատարվում է համապատասխան գրառում:

7.4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով նախատեսված դեպքերում Կողմերը պարտավոր են սույն պայմանագրին կցել անբաժանելի մաս հանդիսացող տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորությունների ամրագրման վերաբերյալ ակտ, որը կազմվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 4-ի ¤23Ն որոշմամբ հաստատված էլեկտրամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակներում էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց կողմից իրականացվելիք գործողությունների ծրագրերի մշակման կարգի համաձայն:

7.5. Մատակարարը կամ Սպառողը կարող են սահմանազատման կետերում տեղադրել էլեկտրական էներգիայի որակի ցուցանիշները գրանցող և հիշող սարքեր:

7.6. Սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված էլեկտրական էներգիայի որակի ցուցանիշները գրանցող և հիշող սարքեր տեղադրելու դեպքում, Կողմերը այդ մասին կազմում են երկկողմանի ակտ, որը կցվում է սույն պայմանագրին:

## 8. Այլ պայմաններ (լրացնում են Կողմերը)

_____

_____

_____

_____

_____:

## 9. Վեճերի լուծումը

9.1. Սույն պայմանագրի առնչությամբ առաջացած վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի դիմելու դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ:

9.2. Սույն պայմանագրի 9.1. կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

## 10. Պայմանագրի գործողությունը և լուծումը

10.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով:

10.2. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

10.3. Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի մատակարարման (Մատակարար-միևչև 6(10) կՎ լարման ցանցերից սնվող Սպառող (բացառությամբ բնակչության)) պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

10.4. Սույն պայմանագիրը կարող է լուծվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

11. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածների ցանկը

11.1. Հավելված №1 - Առևտրային հաշվառքի սարքի և առավելագույն թույլատրելի հզորության վերաբերյալ:

11.2. Հավելված №2 – Մատակարարի էլեկտրական ցանցի և Սպառողի սպառման սահմանազատման կետի և էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման վերաբերյալ ակտ:

11.3. Հավելված №3 – Մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների վերաբերյալ:

Մատակարար՝

գտնվելու վայրը Կապույտ 46

Հ/հ 90078580200 հայբիզնեսբանկ

հեռախոս 94-07-56, 94-25-41

էլ. փոստի հասցեն _____

ֆաքս _____

գործունեության լիցենզիա N

լիազոր անձնագրի տվյալները

ղեկավար _____

(անուն, ազգանուն)

Սպառող՝

գտնվելու վայրը Կապույտ 42

Հ/հ 900311108030 Կապույտ բ/գ

հեռախոս 0285-2-75-09

էլ. փոստի հասցեն _____

ֆաքս _____

անձնագրի տվյալները

ղեկավար _____

(անուն, ազգանուն)

Հավելված
Հաստատված է ԼՂՀ հանրային ծառայությունները
և տնտեսական մրցակցությունը կարգավորող
պետական հանձնաժողովի
2008թ. մայիսի 4-ի թիվ 24Ն որոշմամբ

## Առևտրային հաշվառքի սարքի և առավելագույն թույլատրելի հզորության վերաբերյալ

| Սպառողի հաշվառքի սարքի տեղադրման վայրը | Առևտրային հաշվառքի սարք | | | | | | | | | | Առավելագույն թույլատրելի էլեկտրական հզորություն /ԿՎտ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հաշվիչի | | | | Հոսանքի չափիչ տրանսֆորմատորի | | | Լարման չափիչ տրանսֆորմատորի | | | |
| | տեսակը, գործառնային համարը, տեղադրված կնիքների համարը | թույլատրելի հոսանքը (Ա) | անվանական լարումը (Վ) | հաջորդ պլանային ստուգաչափման ամիսը և տարեթիվը | տեսակը, գործառնային համարը, տեղադրված կնիքների համարը | ճշտության դասը | հիմնամոլուցիչ | տեսակը, գործառնային համարը, տեղադրված կնիքների համարը | ճշտության դասը | հիմնամոլուցիչ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| | 122843 | 40 | 220 | | | — | — | | — | — | 38,8 |
| | 00-505 | (5Ա) | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |

Սպասարկող՝
(անուն, ազգանուն) (ստորագրություն)
Կ.Տ

Սպառող՝
(անուն, ազգանուն) (ստորագրություն)
Կ.Տ

9

Հավելված 2
Հաստատված է ԼՂՀ հանրային ծառայությունները
և տնտեսական մրցակցությունը կարգավորող
պետական հանձնաժողովի
2008թ. մայիսի 4-ի թիվ 24Ն որոշմամբ

# Ա կ տ

## Մատակարարի էլեկտրական ցանցի և Սպառողի սպառման համակարգի սահմանազատման կետի և էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման վերաբերյալ

1. Կողմերի սահմանազատման կետն է՝ Կարմիր և Կապույտ գծի կնիքներ.

2. Կողմերի էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման կետն է՝ ԹՎ 1025 էկրոյ 0,4 կՎ օդ. մետաղալար.

Մատակարար՝

(անուն, պաշտոն)

(ստորագրություն)


Կ.Տ

Սպառող՝

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

Կ.Տ



Հավելված 3
Հաստատված է ԼՂՀ հանրային ծառայությունները
և տնտեսական մրցակցությունը կարգավորող
պետական հանձնաժողովի
2008թ. մայիսի 4-ի թիվ 24Ն որոշմամբ

Մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների վերաբերյալ

1. Մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագինն է՝ 25
դրամ/կՎտժ:

Մատակարար՝

(անուն ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

Կ.Տ

Սպառող՝

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

Կ.Տ

# ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 157

«23» 01 2009 թ. կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման (Մատակարար-մինչև 6(10) կՎ լարման ցանցերից սնվող Սպառող(բացառությամբ բնակչության)) պայմանագրի

ք.Ստեփանակերտ «01» հունիսի 2011թ.

«Արցախէներգո» ՓԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղը, այսուհետ՝ Մատակարար, ի դեմս տնօրեն Ա.Ռ.Մեժլումյանի, որը գործում է «Արցախէներգո» ՓԲԸ կողմից 01.09.2010թ. տրված թիվ 01-001 լիազորագրի հիման վրա, մի կողմից, և «Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարություն» այսուհետ՝ «Սպառող», ի դեմս տնօրեն Գ.Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ Կողմեր, կնքեցին սույն Լրացուցիչ համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Կողմերի կողմից «23» 01 2009թ. կնքված N 457 պայմանագրի՝ «Այլ պայմաններ (լրացնում են կողմերը)» Բաժինը լրացնել հետևյալ կետով՝
- «Սույն պայմանագրով սահմանված՝ վճարման համար ամրագրված ժամկետների վերջին օրը ապառքը (վճարման ենթակա գումարները) չվճարելու դեպքում Մատակարարը Սպառողից գանձում է տույժ՝ հաջորդող յուրաքանչյուր ուշացրած օրվա համար չվճարված գումարի օրական 0.1%-ի չափով: Հաշվարկված տույժը չի կարող գերազանցել ապառքի գումարի 10%-ը: Մատակարարի կողմից վերը նշված տույժերի գանձումը չի կարող մերժվել կամ բողոքարկվել Սպառողի կողմից»:
2. Սույն Լրացուցիչ համաձայնագրի պայմանները կիրառվում են 2011թ. հունիսի«01»-ից (հիմք՝ ԼՂՀ Քաղ.օր. 441 հոդված, 2-րդ կետ):
3. Սույն Լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է Կողմերի կողմից «23» 01 2009թ. կնքված N 457 պայմանագրի անբաժանելի մասը:
4. Սույն Լրացուցիչ համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 /երկու/ օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՄԱՏԱԿԱՐԱՐ

Տնօրեն _____

ՍՊԱՌՈՂ

Տնօրեն _____

Հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի հոկտեմբերի 16-ի №422Ն որոշմամբ

**Էլեկտրական էներգիայի մատակարարման**
**(Մատակարար-մինչև 6(10) կՎ լարման ցանցերից սնվող Սպառող**
**(բացառությամբ բնակչության))**

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 230783**

Ք. Երևան «12» 11 2005 թ.
(կնքման վայրը)

Մատակարարը՝ «Հ. Հ. Տ" ՓԲԸ
(ընկերության անվանումը)

«Էներգո» Պետական հանձնաժողով
(մասնաճյուղի անվանումը)

ի դեմս Գործ. տնօր. Դ. Ղազարյան
(անունը, ազգանունը, պաշտոնը)

որը գործում է գնահ. կանոնադրությ և հետ օրենսդրությ հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մի կողմից, և Սպառողը Էներգո և Ջրամատ ՓԲԸ ջրեր. մեքեն. հրատ. գործարան
(անունը, հայրանունը, ազգանունը կամ անվանումը)

ի դեմս ավագանու դիմաց Շ. Հարությունյան
(անունը, ազգանունը, պաշտոնը)

որը գործում է գնահ. կանոնադրությ և հետ օրենսդրությ հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավորվում է Սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը պարտավորվում է վճարել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:

## 2. Կողմերի պարտականությունները

2.1. Կողմերը պարտավոր են ղեկավարվել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» N358Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով» (այսուհետ՝ ԷՄՕԿ) և սույն պայմանագրով:

2.2. Մատակարարը պարտավոր է.
1) մատակարարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ի N1925Ն որոշմամբ հաստատված էլեկտրամագնիսական համատեղելիության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգով սահմանված որակի էլեկտրական էներգիա.
2) ապահովել էլեկտրաէներգիայի մատակարարումը Սպառողին՝ սույն պայմանագրին կցված էլեկտրամատակարարման սխեմայով նախատեսված հուսալիությամբ.
3) մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, փոստային բաժանմունքների համապատասխան սպասարկման կետերում տեղադրել տեղեկատվություն՝ նախորդ ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի մասին, եթե տեղեկացման այլ կարգ նախատեսված չէ սույն պայմանագրի 8-րդ գլխով.
4) Սպառողի դիմելու դեպքում 08000183 հեռախոսահամարով տրամադրել շուրջօրյա տեղեկատվություն կամ պարզաբանում վերջինիս դիմում-բողոքների և հարցադրումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման ընդհատումների, դադարեցումների պատճառների և վերականգնման

ժամկետների, սպառած էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի, վճարման ժամկետների, Մատակարարի և Սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ.

5) ԷՄՕԿ-ի 75-րդ կետով սահմանված ժամկետում պատասխանել Սպառողի բանավոր դիմումին բանավոր, գրավոր դիմումին՝ գրավոր, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին՝ էլեկտրոնային փոստի միջոցով, եթե առանձին դեպքերի համար ԷՄՕԿ-ով այլ ժամկետ սահմանված չէ.
6) վճարման փաստաթղթում կամ հաշվում գրառումների սխալ հայտնաբերելու կամ Սպառողից այդ մասին դիմում ստանալու դեպքում ԷՄՕԿ-ի 53-րդ կետով սահմանված ժամկետում ստուգել իր գրառումները և արդյունքների մասին գրավոր տեղեկացնել Սպառողին, սխալի առկայության(հաստատման) դեպքում ուղղումը հաշվի առնել ընթացիկ ամսվա համար ներկայացվելիք վճարման փաստաթղթում.
7) Սպառողի պահանջով ԷՄՕԿ-ի 62-րդ կետով սահմանված ժամկետում ստուգել Սպառողի առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտությունը և նրան ներկայացնել դրա աշխատանքի ճշտության մասին գրավոր եզրակացություն.
8) իր միջոցների հաշվին կատարել առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ ԷՄՕԿ-ի 64-րդ կետով նախատեսված դեպքի.
9) ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով փոխարինել Սպառողի առևտրային հաշվառքի սարքերը և փոխարինումից հետո համապատասխան փոփոխություն կատարել սույն պայմանագրում (հավելված №1).

2.3 Սպառողը պարտավոր է վճարել յուրաքանչյուր ամսվա ընթացքում իր սպառած էլեկտրական էներգիայի դիմաց՝ սույն պայմանագրով սահմանված կարգով:

## 3. Սպառված էլեկտրաէներգիայի քանակության և արժեքի հաշվարկը, դրա վճարման կարգը

3.1. Մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանում է Հանձնաժողովը:
3.2. Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի փոփոխման դեպքում սահմանված նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:
3.3. Սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը, բացառությամբ սույն պայմանագրի 3.4 և 3.5 կետերով նախատեսված դեպքերի, որոշվում է Սպառողի առևտրային հաշվիչի՝ տվյալ հաշվարկային ամսվա և տվյալ հաշվարկային ամսվան նախորդող ամսվա գրանցած ցուցմունքների տարբերությամբ, իսկ չափիչ տրանսֆորմատորների առկայության դեպքում՝ այդ տարբերությունը բազմապատկելով նաև դրանց տրանսֆորմացիայի գործակցով:
3.4. Եթե առևտրային հաշվիչն ամիջապես գրանցում է հաշվարկային ժամանակահատվածում ծախսված էլեկտրաէներգիայի քանակը, ապա որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրաէներգիայի այդ քանակը:
3.5. Եթե առևտրային հաշվառքի սարքը տեղադրված է սահմանազատման կետից (հավելված №2) դուրս, ապա առևտրային հաշվառքի սարքով հաշվառված էլեկտրաէներգիայի քանակին գումարվում կամ այդ քանակից հանվում է առևտրային հաշվառքի սարքի տեղադրման և սահմանազատման կետերի միջև էլեկտրատեղակայանքներում առաջացած էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական կորուստների մեծությունը:
3.6. Առևտրային հաշվառքի սարքի խախտման (էլեկտրաէներգիայի քանակության սխալ գրանցում) դեպքում սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով՝ համաձայն ԷՄՕԿ-ի 12-րդ գլխի պահանջների:
3.7. Առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցում է Մատակարարը՝ տվյալ հաշվարկային ամսվա վերջին և հաջորդ ամսվա առաջին երկու աշխատանքային օրվա ընթացքում: Եթե սույն պայմանագրի 8-րդ գլխով նախատեսված է Սպառողի ներկայությամբ առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցելու Մատակարարի պարտավորություն, ապա վերջինս պարտավոր է Սպառողի առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցել նրա ներկայությամբ նախապես՝ առնվազն 3 օր առաջ գրավոր տեղեկացնելով առևտրային հաշվիչի ցուցմունքի գրանցման օրվա և ժամի մասին: Սպառողի չներկայանալու դեպքում Մատակարարն իրավունք ունի առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցել առանց Սպառողի:
3.8. Հաշվարկային ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված էլեկտրաէներգիայի արժեքը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների (հավելված №3) և սպառված էլեկտրաէներգիայի քանակության արտադրյալով:
3.9. Սպառողը նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրական էներգիայի արժեքը պարտավոր է վճարել իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին համապատասխան տեղեկատվությունը սույն պայմանագրի 2.2 կետի 3-րդ ենթակետով նախատեսված սպասարկման կետերում տեղադրվելուց, իսկ սույն պայմանագրի 8-րդ գլխով տեղեկացման այլ կարգ նախատեսված լինելու դեպքում, այդ կարգով տեղեկացվելուց հետո 7 օրվա ընթացքում:

## 4. Սպառողի էլեկտրամատակարարման ընդհատման, սահմանափակման, դադարեցման և վերականգնման պայմանները

4.1. Մատակարարի կողմից պլանային-նախազգուշական աշխատանքներ կատարելու նպատակով

Սպառողի հոսանքազրկումը (պլանային ընդհատում) թույլատրվում է ԷՄՕԿ-ի 27-րդ կետով սահմանված դեպքում և կարգով:

4.2. Մատակարարը Սպառողի էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ԷՄՕԿ-ի 27-րդ կետով սահմանված ժամերին:

4.3. Սպառողի էլեկտրամատակարարման սահմանափակումները և վերականգնումն իրականացվում են սույն պայմանագրի 7.4 կետով նշված կարգի պահանջների համաձայն կազմված ծրագրերով:

4.4. Մատակարարը պարտավոր է դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը՝

1) Սպառողի գրավոր պահանջով և առաջարկած ժամկետում.
2) մարդկանց կյանքի և առողջության անվտանգությունն ապահովելու համար՝ Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով սահմանված դեպքերում.
3) Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում:

